

ՏԱՃԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏՆՍՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ՋԱՐՄԱՅԻ ՔԱՀԱՆԱՑ ԿԵՋԻԻԲԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 27 ՆՈՅԵՄԲԵՐ 1910

ԹԻԻ 35

“ՏԱՃԱՐ,”

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դրուս
Գաւառաց համար տարեկան	40 »
Արսասահմանի համար տարեկան	10 Ֆրանկ
Չեռ.է կը ծախուի պրակը	40 փաւրա

Բաժանորդագիւնները կանխիկ են

«ՏԱՃԱՐ»-ի թէ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Ջարմայր Քահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեչիքաւ, Հայոց եկեղեցի

درسمادنده بشکطاشده ارمنى کليداسنده (داجار) غزتهسى مديرى پاپاس زارماو

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ
Ջարմարքըլար, Յակոբեան խան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Մ. Վրդ. Գալէմբարեան
2. Տ. Տիրայր Մ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւնդ Մ. Վրդ. Դուրեան
4. Տ. Սուրէն Վրդ. Գալէմեան
5. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
6. Տ. Արիտակէս Բնյ. Հիսարեան
7. Տ. Ջարմայր Բնյ. Կէզըրեան

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Ղեւնդ Մ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էքսէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուրբաս Բնյ. Պալլաճեան
5. Տ. Պողոս Բնյ. Պէյազճեան
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բնյ. Անանեան

ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱՆՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ.—Առաջն. Փոխանորդ
Տ. Արսէն Բնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ.—Տ. Ռուբէն Բնյ. Գա-
բիկեան
ԱՄԵՐԻԿԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Գաֆթանեան
ԱՅՆԹԱՊ.—Տ. Դարեգին Բնյ. Պողարեան
ԱՖԻՕՆ ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Խաչատուր
Ա. Բնյ. Տօնէլեան
ԲԱԲԵՐԴ.—Մ. Սանոսեան էֆ.
ԳԱՂԱՏԻԱ.—Առաջնորդ Տ. Բարգէն Եպսկ.
Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ.—Տ. Յարութիւն Բնյ. Սար-
գիսեան
ԵԴԵՍԻԱ.—Բ. Թիւրաքեան էֆ.
ԵՍՁՂԱՏ.—Առաջնորդ Տ. Խորէն Մ. Վրդ.
Դիմաքանեան
ԵՐՁՆԿԱ.—Առաջնորդ Տ. Երուանդ Վրդ.
Փէրտանճեան
ՋՄԻԻՒՆԻԱ.—Տ. Յարութիւն Բնյ. Տ.
Սարգսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ.—Տ. Գալուստ Բնյ. Տ.
Գալուստեան
ԹԱԼԱՍ.—Կարապետ էֆ. Բէրթմէնեան
ԽԱՐԲԵՐԴ.—Առաջն. Փոխանորդ Տ. Ղեւնդ
Ե. Տ. Ստեփանեան
ԿԱՐԻՆ.—Առաջնորդ Տ. Սմբատ Եպսկ.
Սառտէթեան
ԿԻՐԱՍՈՆ.—Մաթոս էֆ. Թոքատեան
ԿԻԻՄԻԻԼՃԻՆԷ.—Տ. Ներսէս Բնյ. Նշան-
եան
ՀԱԼԷՊ.—Առաջն. Տեղապահ Տ. Շահէ
Վրդ. Գապարեան
ՄԱՆՁԷՍԹԸՐ.—Առաջնորդ Տ. Գէորգ Ս.
Եպսկ. Իւթիւճեան

ՄԱՐԱՇ.—Տ. Հմայեակ Բնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐՁՈՒԱՆ.—Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ.—Տ. Ոսկի Բնյ. Պիպիեան
Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ.—Տ. Նաթան Բնյ.
Տատեան
ՈՒՇԱՔ.—Կարապետ էֆ. Քէհնեան
ՊԱՆՏՐՄԱ.—ՊԱԼԸՔԷՍԻՐ.—Առաջնորդ Տ.
Կարապետ Եպսկ. Մազլըմեան
ՊԱՂՏԱՏ.—Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպսկ. Կէօմրիւճեան
ՊԱՐՏԻՉԱԿ.—Յովհաննէս էֆ. Տ. Կա-
րապետեան
ՊՐՈՒՍԱ.—Առաջնորդ Տ. Յովհաննէս Ս.
Եպսկ. Արշարունի
ՌՈՒՍՃՈՒՔ.—Տ. Մկրտիչ Բնյ. Մըրջ-
նիկեան
ՌՈՏԱՍԹՍ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բար-
թոլ Ա. Բնյ. Թաղմեան
ՍԱՄՍՈՆ.—Առաջնորդ Տ. Սահակ Մ. Վ.
Օտապալեան
ՍԵՐԱՍՏԻԱ.—Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բնյ. Օտապալեան
ՍԵԼԱՆԻԿ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բնյ. Թուխմանեան
ՍՕՖԻԱ.—Տ. Մեսրոպ Բնյ. Տ. Մեսրոպ-
եան
ՏԱՐՏԱՆԷԼ.—Տ. Դիոնիսիոս Բնյ. Տրէզ-
եան
ՏԷՏԷ-ԱՂԱՃ.—Տ. Դարեգին Բնյ. Տէօլ-
լէթեան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ.—Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏԻՄԷԹՕԳԱ.—Տ. Գէորգ Բնյ. Թէրզեան
ՏՓՂԻՍ.—Հ. Առաքելեան
ՓԱՐԻՉ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Վառնա-
պուհ Բնյ. Քիպարեան
ՔՂԻ.—Առաջնորդ Տ. Պսակ Վրդ.
ՖԻԼԻՊԷ.—Տ. Տաճատ Բնյ. Դերձակեան
ՖՐԷՉՆՕ.—Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՏԱԲԱԹ, 27 ՆՈՅԵՄԲԵՐ 1910

ԹԻ 35

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—Հայկական երաժշտութիւն, ՏԲԹ. Յ. ԹԻՐԵԱՔԵԱՆ.—Վերանորոգութիւն հայ. եկեղեցւոյ (Բ.) ՊՕՂՈՍ Վ. ԳԱՅՅԱՆԵԱՆ.—«Տաճար» 1911 տարւոյ մէջ, ԽՄԲ.—Թոլսթոյի «Մնարի Գիրքը».—Ս. Գիրքը՝ աշխարհարար, Կոչ մը հայ կրօնաւորներուն, ՈՂԲ.—Կովիտաս Վ.ի համերգը, ՈՒՆԿՆԴԻՐ.—ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ, Շաբաթուան լուրեր:

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ(*)

Հայկական ձայնագրութեան վրայ ժամանակէ մը ի վեր շատ կը խօսուի. ժամանակին ալ բաւական խօսուած է. եւ այժմ ալ Տաճարի էջերուն մէջ հայաբուստ վարպետներու կենսագրութիւնը կը կարդանք. բայց բուն արուեստին վրայ թէ ի՞նչ է եւ ի՞նչ գիրք եւ արժէք ունի հանդէպ եւրոպականին, մինչեւ հիմա բան մը չգրուեցաւ, չսացատրուեցաւ: Տեսակ մը mysticisme կայ կարծես թէ գործին մէջ. ոչ ոք, կարծեմ, գիտէ թէ ի՞նչ է

այս արուեստը կամ դրութիւնը, որուն վրայ միշտ կը լսենք, բայց բացորոշապէս բան մը չենք գիտեր, վստահի աւանդուած, հրապարակուած չէ, կամ թէ մենք հանդիպած չենք:

Բայց ձայնագրութեան վրայ չէ հոս մեր յօդուածին նպատակը, այլ բուն երաժշտականին, այսինքն գիտութեան եւ նորա արուեստական բաժանմանց եւ այլ մանրամասնութեանց:

Գիտենք թէ կայ Արեւելեան երաժշտութիւն մը, հին, վաղնջական, պարսկահնդկական, որուն վրայ եկաւ աւելցաւ արաբականը, յորմէ ծնաւ նոր խառնուրդ

(*) Մեծ հաճոյքով կը հրատարակեմք այս շաբաթուոր յօդուածը՝ գրուած բազմակողմանի հետաքննութեան եւ բարձր օգնականի օգնութեամբ: ՏԲԹ. Յ. ԹԻՐԵԱՔԵԱՆԻ կողմէ, որուն շնորհ խան օգնութեամբ Ռուսիոյ խորհրդայն եւ Ազգ. Ժողովոյ ասեմապետութեան շնորհակցելով յիշատակելի մնացած են Ազգ. օտերգութեանց մէջ: Կը յուսանք որ իր յուզած խնդիրը՝ Հայ ինքնուրոյն երաժշտութեան մը գոյութեան հարցը՝ արժանաւոր ուշադրութիւնը կը գրաւէ մեր արուեստագէտ-բանաստեղծներուն, եւ մասնաւորա-

պէս մեծաշաղկապ երաժշտագէտ Տ. Կովսէաս Վ.ի, որուն կոչումը ըրած է յօդուածագիր հմուտ գիտնականը: Տաճարի էջերը լայնօրէն բաց են խնդրոյն յուսաբանութեան համար գրուելիք լուրջ ուսումնասիրութեանց առջիւ: Աւելցնեմք թէ ուղղուած կարգ մը հարցումները՝ ուսուի, մագումի եւն. վրայ շաբաթը եւ արեւելեան երաժշտութեան հետեւողներու, ընդ որս եւ այս օրերը գրողին ալ, բաց շաբաթը համարեցինք խնդրոյն ամբողջ յուսաբանութիւնը բողոք հրմուտ մասնագէտներու: Ե, ԽՄԲ.

մը որ արաքական տիրապետութենէն ի վեր բացարձակ կը տիրէ յԱրեւելս: Անշուշտ շատ մը փոփոխութիւններ՝ եղանակաւորումներ, յապաւումներ, յաւելումներ եւայլն եղած ըլլալու են ազգէ յազգ, աշխարհէ յաշխարհ, յընթացս ժամանակի, իւրաքանչիւր ցեղի եւ ազգի ինքնուրոյն լինելութեան՝ ընդունակութեան եւ այլ հանգամանաց համամատ: Այլ սակայն էականը՝ հիմնականը միշտ նոյն Մայր-Արեւելեանն է եւ կը մնայ, միւսները լինելով եւ մնալով միշտ պարզ հետեւողութիւն:

Այսպէս է նաեւ հայկականը:

Ինձ համար յատուկ Հայկական երաժշտութիւն մը չկայ եւ չկրնար ըլլալ, քանզի Հայը երբէք գերիշխան եղած չէ, եւ երբէք ազգաց եւ ազանց օրէնք եւ օրինակ տալու չափ ազդեցիկ տիեզերական դիրք մը ունեցած չէ, որպէսզի այլք իրմէ օրինակէին հետեւողաբար, ե ոչ ալ բաւական պարագոյ միջոցներ ունեցած է, բարձր արուեստներ եւ գիտութիւններ մը չակելու: Այլ երբեմն պարսկական եւ երբեմն յունական ազդեցութեան ներքեւ, բնական էր որ մերթ միոյն եւ մերթ միւսոյն հետեւէր:

Ահա այս կէտին մէջ է որ կը տարածայինք իմ պատուական բարեկամիս՝ քաջարուեստ Կոմիտաս վարդապետի հետ, որ հակառակը կ'ընդունի, պնդելով միշտ հայկական ուրոյն արուեստի եւ գրութեան վրայ:

Այս մասին մինչեւ հիմա մերկններուն կողմանէ բացատրական բան մը չերեցաւ, կամ գէթ մենք չտեսանք: Շատ կը հետաքրքրուէի գիտնալ թէ կա՞յ իրացնէ հայկական տարորոշ դրութիւն մը, եւ թէ յոր՞ում կը կայանան այն տարբերական կէտերը որ հայկականը կ'անջատեն եւ կը դիմորոշեն ուրիշներէն:

Բաղաքակիրթ կեդրոններէ հեռու ապրող շինականներու բերնէն լսուած գուսանական եղանակները բաւական ապացոյց չեն մեզ՝ հայկական ինքնուրոյն արուեստ մը որակելու, քանզի անցեալ նուաղեալ դրութեան մը յետին մնացորդ հետքերը կրնան սեպուիլ անոնք:

Ուրախ եմ որ իմ բազմահմուտ բարեկամս, Տ. Կոմիտաս վրդ., որ այսօր առաջին եւ վկայեալ հեղինակութիւնն է մեր մէջ, այս միջոցիս Պոլիս կը գտնուի եւ իմ այս տողերս կարդալու պատենութիւն կ'ունենայ, ինչ որ նոր գրգիռ մը կը լինի իրեն՝ հրապարակաւ եւ աւելի հանգամանօրէն լուսարանելու այս մօտի եւ կարեւոր կէտը, որ ա՛յնչափ անգամ մեր առանձին խօսակցութեան նիւթ եղած էր երբեմն ի Փարիզ:

Այսպիսի հանրային եւ գիտական խնդրոց մէջ ազգայնական նեղ եւ ամուլ դգացումներով չէ անշուշտ որ պիտի վարուինք: Այլ է ազգը սիրելը, ա՛յլ է ճշմարտութիւն մը հռչանելը, ի՛նչ կարգէ եւ ի՛նչ կարեւորութենէ ալ լինի:

Մինչ ցայն, ես հաստատ կը մնամ համոզմանս մէջ թէ հայկական ըսուածը պարզ եւ գուցէ աղօտ արձագանգն է պարսկարաբականին, որուն միշտ հետեւողները եղած են մեր աշուղ ըսուած հայ գուսանները: Եւ այս սովորութիւնը ա՛յնքան հաստատ եւ անզանցանելի դարձած է որ մեր յետին ժամանակներու տաղերգու՝ Ղարապետ՝ նուագածու՝ Նօթագէտ համբաւեալ վարպետներուն համար ալ, ինչպէս են Պապա Համբարձում, եւն., եւն., կը կարդանք որ յունականին եւ բազմիցս ալ Մէվլէվիներուն կը դիմէին կատարելագործուելու:

Հակառակը դժուար կը թուի ինձ հաստատել: Յամենայն դէպս, որովհետեւ շատ կարեւոր եւ հետաքրքրական կէտ մ'է որ կը յուզեմ, գոհ պիտի ըլլայի, եւ ինձ հետ շատ շատեր ի հարկէ, որ ձեռնհասներուն կողմէն պարզ լուսալիր եւ փաստացի լուսաբանութիւն մը տրուէր ինդորոյն վրայ, կա՛մ լրագրաց մէջ եւ կա՛մ ուրոյն տետրակով մը:

Խնդիրը սա է.

1. Կա՞յ ուրոյն հայկական երաժշտութիւն մը.

2. Ի՛նչ է այդ եւ ինչո՞վ կը զանազանի ոչ-ազգայիններէն:

Ռաստ, Նէվա, Տիւրքիա, Չարկեան, Հիճազ եւն., անուններ չստ անգամ ես

ալ լսած եւ կարդացած եմ, եւ բառերէն դատելով պարսկական լինելուն տարակոյս չկայ. այլ արուեստէն չլինելուն՝ միշտ մութ եւ միշտ մեռեալ տառ մնացած են ատոնք ինձ համար:

Այս օրերս պարսկերէն բառարան(*) մը թղթատած ատենս մուսիֆի **موسیقی** բառին վրայ իյնալով՝ տեսայ թէ բառական մանրամասնութեանց մտած է թէ՛ բուն պարսկականին եւ թէ հնդկականին վրայ. թեւադրուեցայ թարգմանաբար ծանօթացնել զայն հայ բանասիրութեան, եւ առիթ ընծայել հմուտ մասնագէտներուն՝ այս մասին խօսելու:

Ըստ մեր հեղինակին, Արեւելեան երաժշտութեան մէջ 12 մասաւ ընդունուած է, զոր եղանակ կրնանք թարգմանել կարծեմ, որք են.

- | | |
|-------------------|--------------|
| 1. Ռահավի | 7. Իրաք |
| 2. Հիւսէյնի | 8. Սֆահան |
| 3. Ռաստ | 9. Նէվա |
| 4. Հիճազ | 10. Իւշշաք |
| 5. Աւազ (բզուրկ) | 11. Զէնկլայ |
| 6. Փոքր (քիւչիւկ) | 12. Բուսելիկ |

Ամէն մէկ մագամին երկերկու շիւ'պի որոշուած է. մին բարձր (بال), միւսը ցած (تال), որոնք կազմեմ վերի և վարի կիսածայններն (տիէզ, պէմօլ) են:

Եւ այս չիւպէներէն իւրաքանչիւրը մի քանի նաղմէներ ունի, զոր չեմ գիտեր ինչ թարգմանած են արուեստական լեզուի մէջ: Այսպէս.

Ռահավիի երկու չիւ'պէներն ունին.

Վերինը վեց որ նովրուզ-արաք ըսուած է, վարինը նոյնպէս վեց որ նովրուզ-աճեմ անուն առած է:

Հիւսէյնիի չիւպէներուն առաջինը (բարձրը) Տիւկեան ըսուած է և 2 նաղմէ ունի, իսկ երկրորդը (ցածը) այն է Մուհայեռ, 6 նաղմէ ունի:

Ռաստի 1ը (Փէնճկեան)՝ 5 ն.:

2ը (Մէպրազա)...

Հիճազ 1ը (Սէկեան)՝ 3 ն.:

2ը (Հիսար)՝ 8 ն.:

Բզուրկ (աւազ) 1ը (Հիւմայուն):

2ը (Նէհլեֆթ):

Փոքր (քիւչիւկ) 1ը (Րիւքիւպ)՝ 6 ն.:

2ը (Պէեաթ)՝ 5 ն.:

Իրաք 1ը (Մուխալիճ)՝ 5 ն.:

2ը (Մաղլուպ)՝ 8 ն.:

Սֆահան 1ը (Թէպրիզ)՝ 5 ն.:

2ը (Նիշաբուր)՝ 6 ն.:

Նէվա 1ը (Նովրուզ-Պարա)՝ 5 ն.:

2ը (Մահուր)՝ 6 ն.:

Իւշշաքի 1ը (Զարուլ)՝ 3 ն.:

2ը (Էվիճ)՝ 8 ն.:

Զէնկլայ 1ը (Զէնարկեան)՝ 4 ն.:

2ը (Ղարալ)՝ 5 ն.:

Բուսելիկ 1ը (Աշիրան)՝ 10 ն.:

2ը (Սապա)՝ 5 ն.:

Յետոյ կուգայ ահեմիլը որ զուգաձայնութիւն կամ ներդաշնակութիւն է ըստ քաւին՝ այլ հոս accordին պէտք է պատասխանէ, կարծեմ. որպէս են, ի ջութակի, զուգադրութիւնը բամբ Doի և Solի, միջին Laի և Réի, թիզ Miի և Laի:

Վեց «անակ» որոշուած է, մասնաւոր անուններով.

Սֆահանի (պէմօլ)էն և

Զէնկլայի (տիէզ)էն կը գոյանայ Սալմակ (سلمك)

Իւշշաքի (պէմօլ)էն և

Ռաստի (տիէզ)էն՝ կերտանիէ (کردانيه):

Հիւսէյնիի (տիէզ)էն և

Բուսելիկի (պէմօլ)էն՝ նովրուզ:

Հիճազի (պէմօլ)էն և

Նէվայի (տիէզ)էն՝ Կուշտ (كوشت):

Քիւչիւքի (պէմօլ)էն և

Իրաքի (տիէզ)էն՝ Թարայ (تاراي):

Բզուրկի (պէմօլ)էն և

Ռահավիի (տիէզ)էն՝ շէնազ (شهناز):

Ասանց ավազէ (աւազ=اوز) ալ ըսուած է և ըստ ոմանց փերտէ (پيرت):

Յետոյ կ'անցնի **شكوه**ի (գուշայ) որ մեր գուսանն է անտարակոյս, որ, կ'ըսէ, 48 տեսակ ունի որոց և կը թուէ գլխաւորները.

Պահարը-Նէշաթ, Ղարիպ, Սէվար, Ղէմզէտա, Պէեաթը-Թիւրք, Սէրֆիրազ, Պէսթէ-Նիկեար, Պէեաթը-Կերտանիէ, Ղէ-

(*) غياث اللغات

հավէնտէկ, Սաֆա, Տիւպէր, Էվիճի-քէ-մալ, Նիհար, Շէհրի, Վիւսալ, Աշիրան, Ղարալ, Իշրէթ-էնկիլ, Պահրը-քէմալ, Ասլի, Իթիտալ, Կիւլիստան, Թէպրիդի-քէպիր, Հայրէթ, Ծէմալի, Բուհ-էֆլա, Մուլթէալի, Մահնէվի, Փէհլէվի ևն.:

Չեմ գիտեր թէ Հայ գուսանները այս անուններն ալ ընդունած են և ի՞նչ յոր-շորջումներով:

Ո Ւ Ս Ո Ւ Լ

Այս բառը շատ լատ հմ մերիններէն, բայց երբէք հանդիպած չեմ բացատրութեանը թէ ի՞նչ է տիրապէս:

Մեր հեղինակը 17 ուսուց կը գնէ:

Մուսամմէս, Թէրքի զարպ, Տու եէք, Տէվր կամ Տուր (ո՛ գիտէ), Սագիլ, Սաֆիֆ, Չահար զարպ, Տիւրը-էֆլան, Մա-յիթիյն, Չարպ, Ֆախթէի զարպ, Չէնպէր, Նիյմ-սագիլ, Ազֆար, Արսատ, Բէմալ, Հէզաճ:

Հուսկ ապա կուգայ մի նոր հետաքրքրական փառ որ նուագելու ժամանակներուն վրայ կը խօսի, որմէ կը հասկըցուի որ Արեւելեայ գուսանականին մէջ ամէն հղանակ անխտիր ամէն ժամանակի համար չէ եղած, այլ իւրաքանչիւր հղանակ՝ ժամանակի որոշ մէկ մասին մէջ ի հանդէս գալ սահմանուած է: Ըստ այսմ.

Ռահալիի համար կ'ըսէ թէ արշալոյսէն մինչեւ ի ծագումն արեւու է:

Հիւսէյնի սահմանն է արեւու ծագումէն մինչեւ մէկ պահ (سک) տունջեան:

Իրաք՝ մինչեւ կէսօր:

Ռաստ՝ ճիշդ կէսօրին:

Իւլիլի՝ մինչեւ տունջեան վերջին պահ:

Բուսելիկ՝ վերջին պահուն:

Իւլլաք՝ մինչեւ ի դեղնիլ արեգական կամ ցերեկոյ:

Ձէնկլայ՝ մինչեւ առաջին պահ գիշերի: Հիճաղ և Բզուրկ՝ սոյն միջոցները մինչեւ գիշեր:

Նէվա՝ կէս գիշերին:

Սֆահան՝ մինչեւ արշալոյս:

Հնդկականին մէջ ալ ընդունուած են նուագելոյ այս որոշ ժամանակները. չեմ

գիտեր թէ մեր մէջ ալ մուտ գտած են ասոնք և ի՞նչ չափով:

Վերջապէս շատ ցանկալի պիտի ըլլայ որ մեր արուեստագէտ բանասէրներու կողմէն մի կատարեալ և որոշ տեղեկութիւն տրուէր, թէ ի՞նչ չափով ընդունուած և ի՞նչ կերպարանք զգեցած է մեր մէջ Արեւելեան Երաժշտութիւնը: Մենք իբր յուշարար դրինք վերի թարգմանութիւնը, կարծելով թէ կրնայ թերեւս օգտակար լինել խուզարկու մասնագէտներու:

20 նոյ. 910

Թ. ԹԻՐԵՍԱՔԵՍԱՆ

Conche (Eure)

FRANCE

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Բ. (*)

Ուսեալ կղերականի պէտքը. — Ընտրութեան հարցը. — Վանքերը՝ վարժարաններ. — Էջմիածին, Երուսաղէմ, Արմաշ. — Օսար կղեր մեր մէջ. — Կրօն. դաստիարակութիւնը Ամերիկայի մէջ. — Յաւալի վիճակ հայ գաղ-րականաց՝ Ամերիկայի մէջ. — Ժողովուրդին պատրէ՛ Եկեղեցականին հանդէպ:

Ինչպէս պարզուեցաւ քանիցս Տանարի էջերուն մէջ, մեր Ազգային Եկեղեցւոյ բարեկարգութեանց հիմը կազմելու է ամէնէն առաջ՝ Եկեղեցականութեան վերածնունդը, բարոյապէս և նիւթապէս: Հաւաքելու ենք այդ բարձր դասակարգին մէջ մաքուր բարոյականով և ընտիր ձիրքերով օժտուած անձեր, հմուտ եկեղեցական, ազգային և օտար գիտութեանց, կազմելով տիպար եկեղեցականութիւն մը:

Ընդհանուր ազգի փափաքը արդէն այս է. կրնանք վստահաբար ըսել թէ առ այս ունենալ մէկն առարկութիւն չունի: Ազգին ձայնը Աստուծոյ ձայնն է, և կամե-նալ՝ կարենալ կը նշանակէ. ունի՞նք Ազգին ձայնը, ունի՞նք նաև կամեցողութիւնը:

(*) Ա. յօդուածը տես «Տանար» քիւ 30:

տրիանալու ենք ուրեմն յուսալից ապագայի մը արշալոյսով։ Եթէ երկար դարերէ վերջ խորապէս համոզուեցանք Համագումարի մը անհրաժեշտութեանը, եւ հաւաքելով իսկ զայն՝ կրկին պիտի չյաջողինք երկնել վերածննալ եկեղեցականութիւն մը, խնայենք այն ատեն մեր պատուոյն, ձեռնադաւ մնալով քան ձեռնարկելով գործի։

Խօսեցայ նախկին յօդուածով թէ մեր եկեղեցականութիւնը բարոյապէս վերակենդանացնելու եւ բարձրացնելու գործնական միջոցներէն կարեւորագոյնը չնշեմք և կուսակրօնութեան դրօշթիւնը՝ աշխարհիկ կղերէն։ Կորուկ քայլ մըն է այս, զոր պէտք է առնել, եթէ կ'ուզենք փրկել կղերը գահալիքի մէջ։ Ուսեալ և հմուտ բնծայացուն ազատ ըլլալու է ընտրել ուզած վիճակը ո՛ր եւ է ժամանակ, առանց զրկուելու եկեղեցական աստիճանէն։

Նոյնքան անհրաժեշտ է որ եկեղեցականաց ընտրութեան և ձեռնադրութեան մէջ պահանջենք ժողովուրդէն՝ զգուշաւոր ըլլալ վկայելու, և մասնաւոր Նպիսկոպոսը՝ զանոնք ձեռնադրելու։ «Ձեռք ի վերայ ուրուք վաղվադակի մի՛ դնիցես», կը պատուիրէ Առաքեալը։ Հասարակ արհեստաւորներ եւ անգործներ, ձայնիդ տիրացուներ կամ ծառաներ եւն։ Թէեւ բնութեամբ ընտիր ըլլան եւ անվնաս, կա՛մ տեղւոյ մը Աղային պաշտպանութիւնը վաշխելով եւ կամ քանի մ'անձանց միջնորդութեամբ եւ նուէրներով առ Նպիսկոպոսն, կը յաջողին օրուան մը մէջ ձեռնադրուիլ՝ չունելով ո՛չ ուսում եւ գիտութիւն, ո՛չ դաստիարակութիւն եւ կըրթութիւն, սոսկ ապրուստի մը յուսով՝ նուազ խեղճութեամբ հայթայթելու իրենց օրապահիկը։ Ասոր դառն հետեւանքները չատնց կրեցինք դժբախտաբար։

Ասոր իբր դարման, ինչպէս բոլոր Հայ սերունդին, ի մասնաւորի Հայ կղերին վերածննդեան խանձարուր պիտի ըլլան Դպրոցները և Մենք ունինք արդէն նշանաւոր կեդրոններ, Ս. Էջմիածին, Երուսաղէմ, Արմաշ, եւն։ Ըստ իս, այս երեքը զօրացնելու ենք հիմնովին. պէտք է բարեփոխել զանոնք, օգտել հմուտ ուսուցիչ-

ներով, հաստատել Աստուածաբանութեան բարձրագոյն վարժարաններ. հոն կանոնաւոր եւ խնամալ ուսմանց ընթացք մը պէտք է կատարեն աշակերտները, ինչպէս էր կանխաւ, եւ անցնելով խիստ քննութիւններէ՝ ստանան իրենց վկայականները։

Ամէն թեմերու բնծայացուները աւարտած ըլլալու են գոնէ մեր թաղային դըպրոցներուն ընթացքը, եւ առաջնորդները պարտաւոր ըլլալու են զրկել զանոնք վաւերաթղթով Աստուածաբանութեան այս բարձրագոյն վարժարաններէն մին՝ ուր քննութեան ենթարկուին եւ ստանան իրենց վկայականը, ինչպէս կ'ընէ ուսուցիչներու համար Ազգ. Ուսումնական Խորհուրդը. այդ վկայականն ի ձեռին դառնալով իրեն, միջավայրը՝ կը ձեռնադրուին թեմակալ Նպիսկոպոսէն։ Սոյն օրինաց զանցառու վիճակաւորք պատասխանատու համարուին հանդէպ եկեղեցական իշխանութեան։ Ձեռն յուսար թէ այս պայմանը վերաւորանք մ'ըլլայ Նպիսկոպոսներուն, քանի որ անցեալին մէջ ստիպուած են անոնցմէ ոմանք Աղաներու թախանձանօք անարժաններ ձեռնադրել, և առիթ տալ ժողովրդային երկպառակութեանց։

Ազգային շատ մը դժբաղդութեանց և ցաւալի կորուստներու գլխաւոր պատճառները կը վերագրուին մեր եկեղեցականաց տգիտութեան և անտարբերութեան։ Քաջաքական դառն պարագաներու բերմամբ Հայութեան ցիր ու ցան գաղթական դաւակները՝ դժբաղդաբար՝ խօսուէն օրինակներ են սոյն ճշմարտութեանց։ Քանիներ անգիտակից են նոյն իսկ խաչ մը հանելու, «Հայր մեր» մը, աղօթք մը արտաբերելու, գաղափար իսկ չունին Ս. Պատարագի Խորհրդոյն նշանակութեանը վրայ, և կ'անգիտանան կրօնի ամենատարրական սկզբունքները, որ եթէ հոս փոքրիկ մանկան մ'իսկ հարցունենք, պիտի կարողանայ ամենայն համարձակութեամբ պատասխանել։ Հանդիպած եմ աղաներու կամ ատենապետի մը որ նամակաւ ներկայութիւնս կը խնդրէր՝ նշեցեալի մը թաղման Սուրբ Խորհուրդին(1)։ Կսկիծ կը զգայ գիտակից սղգային մը և կը խորհի թէ արդեօք այս

ժողովուրդը իր քաղաքին կամ գիւղին մէջ չունեցաւ Հայ Եկեղեցւոյ պաշտօնեայ մը։ Ազգին ինչ ծառայութիւն մատուց այդ կղերքը իր պաշտօնավարութեան շրջանին, և վրան հսկող Առաջնորդ մը չեղաւ որ պարտաւորէր զինք գիտակից գտնուիլ պարտականութեանցը, քանի որ տարւոյն երկաւր ամիսներուն մէջ չունէր ուրիշ դրաղ-մունք, եթէ ոչ այցելութիւններ տալ, շաղակրատել և զբօսնուլ։ Ինչ դարման խորհեցաւ ընել ազգային եկեղեցական իշխանութիւնը հանդէպ այս անպատեհութեանց։

Սոյն պարտազանցութիւններու հետեւանօք էր մեծ մասամբ, որ Ֆրանսայէն, Իտալիայէն և Եւրոպայի զանազան քաղաքներէն արտաքսուած օտար կղերներ և Ամերիկեան միսիօնարներ՝ երբ խուժեցին երամներով մեր երկրին սնմակ դաշտերը, գտան հոն անհովիւ մնացած հօտեր, և իրենց անձնական շահուն բերմամբ, ուղեցին դասել զմեզ՝ հանդէպ օտարաց՝ վայրենի և անկրօն ժողովուրդներու կարգը։ Քաշքշեցին, բաժանեցին, երկպառակեցին, և յաջողեցան սերմանել մէջերնիս գոտութեան և հակառակութեան սերմեր։

Ինչ օգուտ կրցանք քաղել՝ վերջին դարերուն՝ մեր պատմական հոյակապ վանքերէն, երբ ամայի թողուցինք զանոնք և անապատ՝ նսեմացնելով փառապանծ անցեալ մը։ Միթէ եկեղեցականութիւնը կտրող չէր գոնէ անոնց ունեցած քիչ կամ շատ եկամուտներովը պահպանել փոքրիկ կամ միջակ նախակրթարաններ, որոնց իւրաքանչիւրին մէջ տնտեսակ կամ քսանական մանուկներ սնուցեցին։ Եթէ անկարող էինք մեծամեծ գործեր տեսնել՝ կարող չէինք գոնէ փոքր արդիւնք մը արտաբերել։ Հայրիկի եռանդուն գործունէութիւնը և փայլուն յաջողութիւնները Վարագի մէջ՝ շօշափելի ապացոյց և յանդիմանութիւններ են այլոց անպարտաճանաչութեան։ Չեն կրցած անոնք գիտակցութիւն իսկ ունենալ որ եթէ մեր Հայրերը ժամանակաւ բիւրուոր նահատակներու ողջակիզմամբ տոչորեցան, սակայն յաջողեցան Հայութեան սրտին մէջ անջինջ դրոշմել հաւատքի և մաքուր բարոյականի սկզբունքները։ Այդ

մշակուած պտղաբեր դաշտերը անխնամ ձգուած են և խոպանացեալ։

Ներկայիս կեդր. կրօն. ժողովը մեծ ծառայութիւն կը մատուցանէ ազգիս՝ կարգելով կրօնագիտութեան հմուտ ուսուցիչներ իւրաքանչիւր դպրոցներու մէջ։ Ամերիկեան կղերին ժրջանութիւնը հիւանդի օրինակ մ'ըլլալու է մեր կղերականութեան։ Իրենց կիրականօրեայ գպրոցները հիմնուած են նոր և կատարելագոյն դրութիւններու վրայ, ուր կը յաճախեն անընդհատ հարիւր հազարներով աշակերտներ, և կը կրթուին ու կը տիրանան մաքուր բարոյականի և առողջ սկզբանց։ Ո՛րքան երկիրը յառաջացած է, ա՛յնքան աւելի համոզում գոյացուցած են իրենք թէ ապագայ սերունդին իրական զարգացումը՝ անոր ամրապնդուելէն կախուն ունի ուղղութեան և արդարութեան շաւիղեցուն մէջ։ Դասախօսութիւններով սիրելի կ'ընծայեն մանկանց՝ կրօնքը և եկեղեցին, կ'ապացուցանեն թէ աշխարհիս սկիզբէն սկսեալ ամէն ազգեր ունեցած են կրօնք մը՝ որոնց կատարելագոյնն է Բրիտանոնէութիւնը իւր յստակ և փրկարար վարդապետութիւններովը։ հոն սիրոյ և միութեան կապ կը ձգեն հաւասարապէս ամէն դասակարգի մարդկանց մէջ, առանց խտրելու կրօնքը և ազգութիւն, քանի որ ներկայիս ստիպողական անհրաժեշտութիւն մը դարձած է։ Երգեցողութիւններով և պատմական ու կենդանի պատկերներով կը համամեն իրենց դասախօսութիւնները, կը գումարեն լսարանական ժողովներ, և կը հրատարակեն տղոց յատուկ լրագիրներ՝ որոնց անհուն օգտակարութեան շօշափելի փաստեր ունինք։

Եթէ յաջողէինք այսպիսի ձեռնարկներու մէջ՝ յամրաբար և ժամանակով և կարենայինք ջառքել մեր մանուկներուն օգտակար և կենսատու մեռող, եթէ տալինք ձեռքերնին շահեկան և կրթիչ պատմութիւններ, վստահ կրնանք ըլլալ թէ մեծ բարեօրում պիտի տեսնէինք անոնց բարոյականին վրայ։ Այստի սկսէին սիրահարն ըլլալ մաքուր ընթերցանութեան, օգտակար հանդիսանալ իրենց ծնողաց, և

ստիժ անոնց միմեջարութեան: Մանկութիւնը ազգին պարտէզն է, և մեր ապագան կախումն ունի այդ բուրաստանին ընտիր և առատ պտղաբերութենէն: Ներկայիս ո՛րչափ աշխատինք և խնամով սերմանենք, ժամանակը ա՛յնքան ճոխ և բազմաբեղուն հունձքեր պիտի արտադրէ:

Լսարաններու և լրագրութեան ունեցած հուժկու ազդեցութիւնը ազգաց և սերունդներու վրայ՝ արդէն անվիճելի է: Ասկէ առաջ «Բիւզանդիոն»ի մէջ Բրօֆ. Թումանյանի հրատարակած մէկ ընտիր յօդուածը կը շեշտէր անոնց կարեւորութիւնը, և կը մատնանշէր կազմակերպիչ գործելու անհրաժեշտութիւնը: Այս հեռաւոր օտարութեան մէջ այդ երկու զօրաւոր ազդակներուն՝ մեր ժողովրդեան վրայ յառաջ բերած յետադիմութեան և աշխատեցողական ցաւօք սրտի ականատես վկաներն ենք: Հոս ապաստանարան գտած ազգիս տառապեալ դասակարգը՝ անգիտակից զո՛ւ մը եղած է ապականեալ լրագրութեան և զբոլոնի ժողովներու: Այդ ազդակներուն ներգործութեամբ՝ եղան յանձնապատան, գիտակից(?) ամէն բանի՝ առանց ուսանելու, վիճաբանող նոյնիսկ աստուածաբանական բարձրագոյն խնդիրներու վրայ՝ առանց գաղափար մը ունենալու: Ո՛րքան կը ստուգուի Առաքեալին խօսքը՝ թէ «Լեզու փոքր ինչ անդամ է ևւ մեծամեծս բարբառի, ահա եւ սակաւ ինչ հոս զոր պիտի անտառ հրդեհէ»:

Մենք, կղերականքս, մեր բարձր դիրքով և ուսմամբ կրնանք յաջողիլ դիմադրել այս աղէտից, եթէ առիթ տանք և ստեղծենք եռանդուն հոսանք մը մաքուր լրագրութեան, լսարանական ժողովներու, և զուտ ազգային ոգւով կրօնական և բարոյական դասախօսութեանց: «Այլ դու օրինակ լինի՛ր հուստացելոց, բանիւք... քարոզեալ զբանն, հաս ի վերայ ժամու և տարածա՛մու... զգործս աւետարանչի գործեալ, զպաշտօնդ քո կատարեալ կալ»: Այսպէ՛ս կը պատուիրէր Պօղոս իւր սոչակերտին՝ Տիմոթէոսի: Չեւնեթց և կարող եկեղեցականներու պէտքը զգալի է:

Բայց երբ ուսում և գիտութիւն կ'ը-

սենք, և եկեղեցականութենէն կը պահանջենք իւր բարձր դիրքը, թողատրելու չենք ժողովրդեան եւս չափազանցել իր պահանջներն, և անհանդուրժելի կացութեան մատնել եկեղեցականը: Անոնք կ'ուզեն սովորաբար բեռնաւորել զինք առաւելագոյն պարտականութիւններով, և եթէ անձնուրացութեամբ անոնց մի մասն այ ընդունի, այլ եւս չարունակեալ իբր արդարացի պահանջներ՝ ո՛չ չափ կը գծեն և ոչ սահման կը դնեն: Կը կտմնան որ ձեռնհաս ըլլայ նա առէն բանի՝ իբր գերմարդկայի՛ն էակ մը. ուսում և գիտութիւն ունենալէ զատ՝ ըլլայ նաև լեզուագէտ, վարչագէտ, բժիշկ, դատաւոր, և գուցէ դրամ եւս իրենց հայթայթէ, գործ բանայ, և որ ի կարգին: Սոյն պահանջները, միանգամայն և դժգոհութիւնք՝ կը դառնացունեն եկեղեցականին կեանքը և կը դժուարացնեն իւր գործունէութիւնը:

Կա՛մ մանաւանդ սուելին, եկեղեցականը նուիրուած ըլլալով ծառայելու ժողովրդեան և Եկեղեցւոյն, կը տառապի միւս կողմանէ ապրուստի հարցով, և երբ կը տեսնէ թէ իր եռանդուն և նուիրեալ գործունէութեանը համաձայն չի վարձատրուիր, և կարող չըլլար պատուաւոր ապրիլ, կը բռնադատուի ստորնաճալ, խաղաղիկ ըլլալ Աղաներու քմահաճոյից. պարտաւորուած է յակամայս աչք գոցել կարգ մը անկանոնութեանց և ղեղձումներու, կատարել հաճոյակատարի դեր մը՝ կողմնակալութեամբ դիտելով զանազան խնդիրներ: Եթէ տգէտ է արդէն և անգիտակից՝ կը մղեն զինք ուր կ'ուզեն և կը տանին ուր կը կամենան, իսկ եթէ գիտակից է և արդարասէր՝ կը ճգնին դժուարացնել իր ձեռնարկները, երկպառակել ժողովուրդը և ուժացնել զանոնք իրմէ: Եկեղեցականաց այս աստիճան ստորնաճալը՝ ազգին անպատուութիւն է բացարձակապէս:

Չենք ենթադրեր թէ հառած ըլլայ ժամանակը՝ արմատական դարման մը ընելու այս անպատեհութեանց: Եթէ որոշեալ և հաստատուն ամսականներ սահմանենք իւրաքանչիւրին՝ ըստ իրենց դիրքին և աստիճանին, աղատ պիտի ըլլան այն ատեն

նիւթական նկատումներէ, և պիտի նուիրուին անձնութեամբ Ազգին և Եկեղեցւոյն:

Սակայն Ազաներու քմահաճոյքն ալ սահման մը չունի, և կրնան զեղծանիլ դարձեալ, ինչպէս մատնանշած էր Տ. Բարգէն Եպիսկ. Տաճարի մէջ հրատարակած ուշագրաւ յօդուածովը. այն դրամը որ Ազգինն է և անոր կամօք պիտի սահմանուի իւր Եկեղեցւոյ պաշտօնէից ապրուստին, Ազգային մէկը կրնայ գործածել ըստ իւր քմահաճոյից իր մարդերուն՝ իբրեւ իւր սեփական ստացուածքը. և եկեղեցականին եթէ կ'ուզէ կուտայ և եթէ չուզէ՝ կը մերժէ կամ կ'երկարածէ: Անարժէք և անգիտակից անձեր տեսեր եմ, որ իշխան-աղա ըլլալու մարմաջով ջանացեր են խլել ժողովրդեան քուէները, և երբ յաջողած են անցնիլ պաշտօնի գլուխ՝ և ժողովուրդը ձեռներնին յանձնած է քահանային իրաւունքը Ս. Խորհրդոց մատակարարութեան առթիւ՝ որպէս զի իրենք տան ուղղակի անոր, գրպանած և մտած են դրամները: Մի անգամ ընդ միշտ ամէն տեսակ զեղծումներ խափանելու համար՝ անհրաժեշտ է դարձան մը:

Պիտի առաջարկէի որ ինչպէս դպրոցներու մատակարարութեան կամ հոգածութեան համար ունինք Միացեալ Ընկերութիւնը, այսպէս նաեւ եկեղեցականաց դրամական մատակարարութեան համար կազմէինք կեդրոնական Մարմին մը՝ որուն յանձնուի եկեղեցականներու ամբողջական ցուցակը: Այդ մարմնայն քով կեդրոնացունենք բոլոր թեմերու պաշտօնէից եկամուսները, և դանաղան Վիճակաց Ժողովներուն որոշողութեանցը համաձայն՝ կեդր. Մարմինը սահմանէ իւրաքանչիւր եկեղեցականի ամսականներն և վճարէ կանոնաւորապէս: Սոյն մարմինը կրնայ ունենալ ապագային նաեւ նպաստից անուակ մը՝ կարօտ եկեղեցականներու, որուն գուցէ սիրայօժար նուէրներ ալ ընեն մեր ազգայինք և կամ կտակներ յատկացնեն: Կանոնաւոր միջոց մ'է որով կ'ազատենք Եկեղեցականութիւնը Ազաներու քմահաճոյքներէն, և պաշտօնեան իւր կեդրոնավայրին մէջ չունենար ո՛ր և է դրամական առնչութիւն կամ խնդիր այլոց հետ:

Երբ յաջողինք կարգադրել այսպէսով մեր եկեղեցականութեան բարոյական և նիւթական վիճակը, հիմնական դարձանք միանգամայն գնահատելի ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլանք ազգին, և պիտի տեսնենք՝ ո՛չ այնքան հեռաւոր ապագայի մէջ՝ թէ վարդապետ աշխարհականաց դասակարգ մը սիրայօժար պիտի սկսի նուիրուիլ այն նուիրական ասպարէզին:

Նիւ-Եօրթ

ՊՐԸՈՍ ՎՐԴ. ԳՍՅԹԱՆԵԱՆ

«ՏԱՃԱՐ» 1911 ՏԱՐԻՈՅ ՄԵՋ

Անցեալ շաբթու պարզեցինք Տաճարի վիճակը՝ մատնանշելով նոյն իսկ թերիները, զորս փորձառութիւնը—և հարկ է աւելցնել—համակիր բարեկամներու խորհուրդները կը ցուցնէին մեզ:

Այդ թերիներուն կարեւորագոյնը, Ս. Գրոց մեկնաբանական մասը, խոստացած է լրացնել երիտասարդ և համակրելի Արմաշական մը, Տ. Սուրեն Վ. Գալէմեան, որու ինքնագիր թէ թարգմանածոյ գրութիւններն այնքան հաճոյքով և օգտիւ կը կարդացուին, և որ ամէն շաբթուան Ս. Գրական ընթերցումներէն թերադրիչ հատուածի մը մեկնաբանութիւնը պիտի ներկայացնէ սեղմ ու հիւթեղ ոճով մը, իր ուրիշ օգտակար գըրուածներէն անջատաբար:

Հայ. Ս. Եկեղեցւոյ Պատմութեան և իր երանաշնորհ Հայրերու կեանքին և գործերուն վրայ՝ օրուան ազգային-եկեղեցական տօներուն առթիւ՝ Ժողովրդական ու քիչ մըն ալ բանաստեղծական զգայուն ոճով, թրթռուն հատուածներ աւելի յաճախ առիթ պիտի ունենան ըմբոշխնելու կրօնա-

Թերթիս ազգասէր ու եկեղեցասէր ընթերցողները՝ յառաջիկայ տարեշրջանին մէջ։

Այս ճիւղը սիրայօժար ստանձնած է Տ. Տիրայր Վ. Մարգարեան։

Բզիւ առաջնորդ Տ. Պսակ Վ. Խորէնեան, որու առ նորընծայ քահանայ ունի ուղղած գեղեցիկ խրատականն այնքան օգտիւ և հաճոյքով կարդացուեցաւ, այս շարթու իոկ խմբագրութեանս ուղղած համակրական նամակով մը կը խոստանայ շարք մը եկեղեցագիտական յօդուածներ, արդիւնք խղճամիտ ուսումնասիրութեանց։

Ռօտօսդոյի արժանընտիր առաջնորդ Տ. Գէորգ Ծ. Վ. Ասրանեան, որուն հոգեցունց յօդուածները չեն մոռցուած բնաւ, պիտի ներկայացնէ նկարուն ոճով մը իր ուղեւորական տպաւորութիւնները՝ Պոլսէն-Էջմիածին՝ ուր մասնակցեցաւ կաթողիկոսական ընտրութեան՝ իբրեւ պատուիրակ Խարբերդի, ի դարձին Կիլիկիայէ ուր գացած էր արհաւիրքի ամէնէն արիւնոտ օրերուն։

Պատր. Փոխանորդ Տ. Ղեւոնդ Խ. Վ. Դուրեան պիտի շարունակէ իր օգտակար աշխատակցութիւնը, խօսելով Յիսուսի կեանքէն և ցոլացնելով Աւետարանի վսեմ բարոյականը։

Տաճար իր այժմու միւս աշխատակիցներէն զատ, որոնց կը փութայ մատուցանել իր ջերմ շնորհակալութիւնները, աշխատակցութեան խոստում ստացած է ի մասնաւորի Սեբաստիոյ Առաջնորդ նորապսակ Տ. Թորգոմ Եպիսկ. Գուշակեանէ, որու Թրթուռն ուղերձը՝ առ սիրեցեալ ու վեհափառ Հայրապետն ազգիս՝ քաղցր և արդարեւ սփոփարար տըպաւորութիւն մը թողուց միտքերու վրայ։

Միւս կողմէ նորապսակ Տ. Բաբգէն Եպիսկ. Կիւլէսերեան, Գաղատիոյ անձնուէր առաջնորդը, որ իբր գրական և եկեղեցագիտական բարձր արժանիքին կը միացնէ ժողովրդեան գործնականապէս օգտակար ըլլալու կարող և հետամուտ միտք մը, իր պարբերական աշխատակցութիւնը պիտի բերէ կրօնաթերթիս, լուրջ և հմուտից յօդուածներու շարքով մը, որոնց կարեւորութիւնն և օգտակարութիւնը ցոլացնելու համար պէտք չկայ ուրիշ բացատրութեան, եթէ ոչ վերյուշումը 1905 և 1906 տարեշրջաններուն մէջ իր հրատարակած տիպար կրօնաթերթը՝ Լոյս։

Այս բոլոր հեղինակաւոր եկեղեցականներու աշխատակցութիւնը բաւական է համոզում գոյացնելու թէ Տաճար 1911 տարեշրջանին մէջ առաւել եւս ի վիճակի պիտի ըլլայ ճանչցնելու և սիրցնելու Հայուն իր Ս. Կրօնքը, հիմնուած Աւետարանի փրկարար վարդապետութեանց վրայ, իր Ս. եկեղեցին՝ նահատակներու կարմիր արիւնովը օծուն՝ որ անբաժան միութեամբ մը կապուած է դարերու ընթացքին մէջ իր հովանաւորած ու պահպանած մարտիրոսայեալ ազգին հետ։

Բայց ատկէ դուրս, Տաճար նպատակ ունի պայքարիլ—խաղաղ՝ խօսքի պայքարով մը—հայ ժողովուրդին մէջ հեռզհետէ տարածուիլ սպառնացող սկեպտիկ ոգիին դէմ, եւրոպական ռօքան հեղինակաւոր նոյնքան ալ ժողովրդական գրողներու շահեկան գործերը ծանօթացնելով հայ ժողովուրդին, ցուցնելու համար բովանդակ անհեթեթութիւնը գիտութեան և

կրօնքին կարծեցեալ ընդդիմադրա-
տութեան, հաստատելու համար տիե-
զերքն ստեղծագործող Մեծ Ուժի մը,
ամենակարող, ամենուրեք, ամենա-
զէտ, ամենատես Աստուծոյ մը, յա-
ւիտենական Իսկի մը գոյութիւնը,
զոր՝ աւա՛ղ՝ շատեր — նոյն իսկ եկե-
ղեցականներէն — կը մոռնան իրենց
ամենօրեայ կեանքովն ու գործունէու-
թեամբ։

Գիտնալով նաև ամենակարեւոր
գերը զոր՝ ազգերու և անհատներու
կեանքին մէջ՝ կը կատարեն շինիչ
պատմութիւնները, թելադրող կեն-
սագրականները, յառաջիկայ տարե-
շրջանին մասնաւոր էջ մը պիտի բա-
նանք ատոնց, բարոյականը և նկարա-
գիրը ուժովցնելու համար հայ կեան-
քին մէջ։ Վիպակներ՝ առաւել կամ
նուազ ընդարձակ՝ իրենց արժանա-
ւոր տեղը պիտի ունենան այդ բաժ-
նին մէջ, միշտ հոգ տարուելով խնո-
մոտ ընտրութեան մը, և հրատարա-
կելի գործին գերազանցապէս բարո-
յական հանգամանքին։

Միւս կողմէ կ'աշխատուի բարձ-
րացնել գրական ճիւղը, ապահովելով
աշխատակցութիւնը ծանօթ, սիրուած
և հմուտ աշխարհական գրողներու։

Իսկ Ազգային բաժնին մէջ սեղմ
կերպով պիտի ամփոփուին շարժումն
կարեւոր լուրերը, գոհացում տալու
համար կարգ մը հեռաւոր անկիւն-
ներէ յայտնուած փափաքներու, մերթ-
ընդ մերթ ամփոփ տեսութիւններ ևս
ընելով ազգային կեանքի այս կամ
այն երեւոյթին վրայ։

Գեղեցիկ առաջագործութիւններ են
ասոնք, որոնցմէ ոմանք կը գործա-

դրուին կամ անմիջապէս կը սկսին
գործադրուիլ յառաջիկայ տարեշրջա-
նին Ա. թիւէն իսկ, իսկ ոմանց գոր-
ծագործութիւնը կը կարօտի բացառիկ
զոհողութիւններու։

Թերթիս տնօրէն-խմբագիրը յո-
ժարակամ ստանձնած է զոհողութեան
մեծագոյն բաժինը։ Դժբախտաբար իր
բոլոր բարեյոժարութիւնը ապարդիւն
կը մնայ, երբ իրականութիւնը չպսակէ
իր յոյսերը։ Այն ժամանակը զոր լոկ
խմբագրական ճիւղին յատկացնելով
կարելի պիտի ըլլար թերթը լաւա-
գոյն վիճակի մը վերածել, այս առա-
ջին շրջանին, դժբախտաբար հարկ
եղաւ նուիրել այս կամ այն գործա-
կալութեան հետ ուղղակի թղթակցե-
լու, բաժանորդագներու գանձման և
առաքման կրկնակի խնդրանքներով և
յանձնարարութիւններով։

Հաղիւ մէկ տարեշրջանի մէջ, չա-
բաթաթերթի մը մօտ հարիւր ոսկիի
պահանջ մ'ունենալը ամէնէն եռան-
գուն աշխատողի մը համար իսկ քա-
ջալերական ըլլալէ հեռու է։

Վերջին հրաւէր մը կ'ուղղենք,
ուրեմն, տակաւին հաշիւ ունեցող
Պատ. գործակալներուն և բաժանորդ-
ներուն, փութոյ՛ կարգադրելու ի-
րենց հաշիւը քերթիս սևօրէն-խըմ-
բագրին հետ, եթէ չեն ուզեր իր-
րեւ պարսական ներկայացուիչ այն
ընդհանուր համարաւորութեան
մէջ, զոր «Տաճար»ի Վարչական Մար-
մինը մտադիր է հրատարակել մեր
ձաւոր թուով մը, թերթին միամեայ
գործառնութեանց մասին։

ԽՄԱՅԻՐՈՒԹԻՒՆԸ

ԹՈՒՍԹՈՅԻ ՍՆԱՐԻ ԳԻՐՔԸ

Թուս մեծ խորհողն ու մարդասէր՝ Թուրքոյ՝ որ ոչ եւս է, ունէր իր Սնարի Գիրքը, զոր ինքն իսկ հոգ տարած էր կազմելու մեծ խնամով։ Իր ամենօրեայ ընթերցումներուն միջոցին, աշխարհի բոլոր ժողովուրդներուն՝ նիւն ու նոր ժամանակներու մէջ երեւոյղ մեծագոյն խնաստասիրներու եւ գրագէտներու հրաշալիքներուն մէջ հանդիպած ընտելագոյն հասուածները, ուսումնասիրութիւնները, կարճ կամ երկայն մտածումները սովորութիւն ունէր ամփոփելու հաստի մը մէջ, որ «Իմ Ընթերցումներս» խորագիրը կը կրէ, եւ զոր միշտ պատաստ կը պահէր իր սնարին վերեւ, ամէն օր նորագոյն եւ շուագոյն հասուածներով ձոխացնելու համար զայն։ Թանկագին գոհարեղիւններու տուփէ մը աւելի մեծարժէք է ունենալ այդ հաւաստածն, ուր կը խօսանալ աշխարհի մեծագոյն խորհողներու շուագոյն մտածումները։ Ծանարի ընթերցողները երբեմն երբեմն առիթ պիտի ունենան անդրադառնալու առնց վրայ, եւ իրենք ալ խորասուզուելու ամէնէն բարձր ու ազնիւ խոկումներու մէջ, զանոնք հաւաստող ու սխալի փունջ մը կազմող մեծ Միտքին նման։ Սկսիմք, ուրեմն, ներկայացնելով գեղեցիկ մտածումներ՝ ընթերցանութեան օգուտին, եւ փոխադարձ օգնութեան պէտքին վրայ։—

Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ւ Մ Ը

Մասնաւորապէս ուսանելու, գիտնալու խնդրոյն մէջ ամենամեծ կարեւորութիւն ունի նախընտրել քիչ քանակութեամբ լաւ բաներ, քան մեծ քանակութիւն մը՝ ոչ միայն գէշ բաներու, այլ նոյն իսկ միջակ բաներու։

Մենք որոճացողներու ցեղին կը պատկանինք. չի բաւեր մեր միտքի մարսողութեան ներկայացնել բազմաթիւ գիրքերու շարքերը. եթէ լաւ չծամենք, մեր ընթերցումները ա՛յլ ուժ կուտան մեզի եւ ոչ սընունդ։

X

Անդրադարձա՛ք ձեր ընտրեալ պղտիկ մատենադարանին պարունակութեանը վրայ։ Ինչ որ քաղաքակիրթ երկիրներու մէջ, հազարաւոր տարիներու ընթացքին, արտադրած են ամէնէն գիտնական եւ նշանաւոր

միտքերը, ձեր արամադրութեանը փակ կը գտնուին լաւագոյն կարգով մը, իբր արդիւնք անոնց խնաստութեան եւ ուսումնասիրութեանը։ Եթէ այդ անմատչելի եւ մեկուսացած մարդիկը ուղէիք հարցափորձել իրենց ներքին կեանքին մէջ, պատշաճութեան օրէնքը հեռու պիտի պահէր զանոնք ձեր հետաքրքրութենէն։ Եւ սակայն այն մտածումները, զոյս չեն հաղորդած իրենց լաւագոյն բարեկամներուն, յստակ բառերով դրած են անոնք իրենց գիրքերուն մէջ, մեղի՛ համար որ օտար ենք իրենց եւ բոլորովին տարբեր դարու մը մէջ կ'ապրինք։

X

Գրականութեան մէջ եւս ճիշտ այնպէս է, ինչպէս է կեանքի մէջ. ամէն կողմ կ'իյնաս անարբագրելի խառնակոյտի մը վրայ, որուն անունն է լեզէոն, որ ամէն կողմ կ'եռայ եւ ամէն կողմ կ'աղտոտէ, ինչպէս ճանճերը՝ ամառուսն մէջ։ Ասկէ՛ առաջ կուգայ գէշ գիրքերու հեղեղը, առատութիւնը գրական որոմներուն որ կը խղդեն, կ'ոչնչացնեն ցորենի աննդարար հատիկները։

Այս գիրքերը ժողովուրդէն կը դռնան իրենց ժամանակը, դրամը, եւ այն ուշագրութիւնը զոր պէտք է ընծայէին պարկեշտ նպատակներու հետապնդող ընտրեալ գործերու։

Մարդկութիւնը իր կարճատե գոյութիւնը, որ այնքան ժլատ կերպով սահմանուած է իրեն, պէտք է յատկացնէր ճանչնալու բոլոր ազգերու եւ ամէն ժամանակներու մեծ վարպետները, արուեստի հանճարները որ աշտարակներու նման կը բարձրանան ամբողջն վեր, եւ կը մշտնջենաւորեն անմահ փառքով պսակուած անուններ։

Միայն այս գրողները կարող են դաստիարակել եւ կրթել։

Գէշ գիրքերը որքան քիչ թուով կարգանք, շատ է նորէն. ընդհակառակն լաւ գիրքեր որքան շատ քանակութեամբ կարգանք, քիչ է դարձեալ։ Ծօրհնատեք

X

Կարդա՛ միշտ լաւ համբաւ ունեցող
գիրքերը: Եթէ երբէք բաղձաս մերթ ուրիշ
ընթերցում ալ ընել, մի՛ մոռնար բնաւ
վերադառնալ առաջուան գիրքերու դ:

Սեմեկս

×

Լաւ գիրքերը կարդացէք միւսներէն
առաջ. ապա թէ ոչ քնաւ ժամանակ չսկսի
գտնէք զանոնք կարդալու: Թօրօ

×

Նիւթական և իմացական թոյներուն մի-
ջեւ գտնուած տարբերութիւնը սա է. ա-
ռաջինները սովորաբար գէշ համ մը ունին,
մինչ միւսները՝ լրագրի և գրքի ձեւի տակ՝
հրապուրիչ են, և այնքան աւելի յանկու-
ցիչ ու հետաքրքրական, որքան աւելի
վատթարացած է ընթերցողին ճաշակը: ***

ՓՈԽԱԳԱՐՁ ՕԳՆՈՒԹԻՒՆ

Նոյն իսկ երբ մենք չուզենք, չենք
կրնար ինքզինքնիս արգիլել զգալէ զմեզ
ամբողջ մարդկութեան միացնող կապը:
Թենք անոր կապուած ենք ճարտարագոր-
ծութեան, վաճառականութեան, արուես-
տից, գիտութեանց միջոցաւ, և մասնաւոր-
աչխարհի մէջ մեր ամենուս ալ կացութեան
նոյնութեամբ: ***

×

Բարինները մէկմէկու կ'օգնեն նոյն իսկ
առանց նշմարելու. չարերը դիտմամբ իրա-
րու կը վնասեն: Զինակաւս առած

×

Ամէն մարդ ունի իր բեռը, իր թերու-
թիւնները: Ինչպէս որ կրնար աղբիւր առանց ու-
րիշն օգնութեան: Ահա այս պատճառով պէտք
է մէկմէկու օգնենք՝ փոխադարձաբար՝ լաւ
խորհուրդներով ու մխիթարութիւններով,
և մէկմէկ միշտ զգուշացնելով: ***

×

Մեր ապրած աշխարհը այնպէս մը կալ-
մակերպուած է որ մարգիկ միասին աշխա-

տելով շատ աւելի գործ կ'արտադրեն, քան
եթէ անոնց իւրաքանչիւրն անջատաբար
աշխատէր: Եւ սակայն այս իրողութիւնը
չապացուցաներ թէ այս մարդոց ինը հարիւր
իննսուն և ինը անհրաժեշտաբար գերի
պէտք է ըլլան մնացեալ մէկին:

Հանրի Ժօրժ

×

Բարի մարդը վարպետն է չար մար-
դուն. չարը ճիշտ այն կոչտ նիւթն է զոր
բարին պէտք է յղկելու աշխատի: Այն որ
չի յարգեր իր վարպետը, և չի սիրեր այն
նիւթն որուն վրայ սիրտ աշխատի, կը
զեղծանի՝ նոյն իսկ եթէ շատ մտադի ըլլայ:

Լաօ-Ձե

×

Մարդկութեան ամբողջ պատմութիւնը,
յորմէհետէ զայն կը ճանչնանք, պատմու-
թիւնն է իր չարութումին՝ հետզհետէ դէպ ի
աւելի սեղմ համերաշխութեան մը հասնե-
լու: Այս համերաշխութիւնը կը գոյանայ
զանազան միջոցներով, և կը նպաստաւոր-
ուի ոչ միայն իրեն համար աշխատողներէն,
այլ և նոյն իսկ ատոր հակառակողներէն: ***

Ս. ԳԻՐԳԸ՝ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ

ԿՈՉ ՄԸ ՀԱՅ ԿՐԾՆԱԻՌՆԵՐՈՒՆ

Արթ. Տ. Խմբագիր.

Տաճար կրօնաթերթը որ մեր ազգին
մէջ շատ կարեւոր պակաս մը լեցնելու կոչ-
ուած է, անցեալ 29րդ թիւին մէջ հրատա-
րակած էր խիստ օգտակար յօդուած մը,
«Աստուածաշունչին ազդեցութիւնը» խո-
րագրով և Սուրէն Վ. Գալէմսեան ստորա-
գրութեամբ:

Տաճարի յօդուածները կարդալով՝ մե-
ծապէս կ'օգտուիր. բայց մասնաւորապէս
այդ յօդուածը, և մասնաւոր իր բնաբանը,
առիթ տուաւ ինձ ներկայ «կոչ»ը ուղղելու
հայ Եկեղեցականներուն:

Յօդուածը կը խօսէր Ս. Գրքին աստուածայնութեան ապացոյցներուն վրայ շատ համոզիչ լեզուով մը, բայց կը սկսէր ու կը վերջանար գրաբար բնաբանով մը. «Ամենայն գիրք Աստուածաշունչք և օգտակարք ի վարդապետութիւնէն և ի յանդիմանութիւն և յուզողութիւն և խրատ Արդարութեան»: Գեր. Հայր Սուրբը այդ յօդուածով կը փափաքէ որ մեր կրօնական գեացունիները վառ պահենք, կարդալով Աստուածաշունչ Ս. Գիրքը, որով միայն պիտի կրնանք հաստատուն պահել մեր հաւատքը, և Ս. Եկեղեցին: Օգտուեցայ մեծապէս իր յօդուածէն, բայց դժբախտաբար չհասկցայ դրած գրաբար յառաջաբանն և վերջաբանը, ու ստիպուեցայ դիմել աշխարհաբար Աստուածաշունչին (Պայպլ Հաուսի տպ.), և այն ատեն միայն կրցայ լաւ մը տեղեկանալ իմաստին: Ու սկսայ խորհիլ թէ արդեօք քանիներ կան ինծի պէս գրաբարը չհասկցող, և եթէ հասկնան իսկ, Աստուածաշունչ Ս. Գիրք չունին, ո՛չ գրաբարը, ոչ ալ գոնէ աշխարհաբարը: Ինչո՞ւ:

Ճիշտ այս «ինչո՞ւ»ն է զիս այս տողերը գրելու մղողը: Չմոռնամ ըսելու որ կեանքիս մէջ առաջին անգամ է որ թերթի միջոցաւ տկար գրիչովս հրապարակ կ'ելլեմ, խոնարհ առաջարկ մը ընելու բարեպաշտ Հոգեւորականներուդ, յուսալով որ ազգիս օգտակար ծառայութիւն մը մատուցանելու կարող պիտի ըլլանք, ձեր ջանքերուն և օգնութեան շնորհիւ:

Արդ, իմ առաջարկս այս է որ՝

Ա. Դպրոցներուն մէջ Աստուածաշունչը և Նոր Կտակարանը դաս տրուի:

Բ. Ժողովուրդին մէջ Աստուածաշունչ Ս. Գիրք տարածուի, իրենց հասկնալի լեզուով:

Առաջինը կը յուսամ որ շուտ հաւանութիւն գտնէ, այն ալ եթէ շարունակէք: Բայց երկրորդը. աժան գնով Աստուածաշունչ տարածել և պարտաւորիչ ընելը. բաւական ծանր խնդիր մը կ'երևայ, այնպէս չէ՞:

Բայց եթէ կալիք ունենաք, շատ կը թեթեւայ. կամքին հետ հաւաստ պէտք է, և հաւատքին հետ սէր:

Ունիք այս երեքը, ո՛վ բարեպաշտ կրօնաւորներ և հոգեւոր Հայրեր:

Մեր տունները և մեր դպրոցները անպատճառ մէյմէկ Ս. Գիրք գտնուելու են. ժողովուրդը այդ բանին համոզելու պարտքը ձեր վրայ կը ծանրանայ: Ձեր կոչումը բարձր է, ո՛վ հոգեւոր հովիւներ: Ձէ՞ք տեսներ, հօտը ո՛ւր կ'արածի, ի՞նչ կ'ընէ... Ձէ՞ք ողբար անոնց հոգեւորապէս խեղճ կեանքին վրայ: Ինչո՞ւ եկեղեցիները հաւատացեալ չի գտնուիր. ո՛ւր կ'երթան գոնէ կիրակի օրերը. ո՛ւրտեղ ժամանակ կ'անցնեն. չէ՞ք հետաքրքրուիր, չէ՞ք իմանար:

Յօդուածներ գրելով, քարոզ խօսելով (ան ալ ամէն կիրակի չէ) ժողովուրդ մը չուզողներ: Գործ պէտք է, գո՛րծ: Հովիւ մը իր ոչխարին համար կեանքը կուտայ, ինչպէս որ Տէր Յիսուս իր պատուական կեանքը չինայեց: Դուք ի՞նչ բանի կը նուիրէք ձեր կեանքը... Պէտք է դարման մը խորհիք այս ինկած ժողովուրդը վե՛ր, վե՛ր, մեր Աստուծոյն բարձրացնելու, որ անոր սեփական ժողովուրդը ըլլանք:

Եթէ երբեք ճշմարիտ սրտով ողբացող մըն էք, ընդունեցէք իմ անկեղծ կոչս, որով մեծ հաւատք և յոյս ունիմ թէ մեր գոնէ ապագայ սերունդին օգտակար և Աստուածահաճոյ գործ մը ըրած կ'ըլլաք:

Նպատակս է Տաճար կրօնաթերթիդ միջոցաւ կրօնականներէ հանգանակութիւն մը՝ աշխարհաբար Աստուածաշունչ Ս. Գիրքէ հայ ժողովուրդին մէջ աժան գնով տարածելու համար: Բահաններէն մէկ մէ՛ծիտ, վարդապետներէն կէս ոսկի, եպիսկոպոսներէն մէկ ոսկի. աւելի տուողը և աշխարհականներէն ալ մասնակցողը՝ իր քսակէն և իր հաւատքէն կախում ունի:

Մեծ յոյս և հաւատք ունիմ որ այս Աստուածահաճոյ մէկ կոչս ընդունելութիւն պիտի գտնէ:

ՈՂԲ. (*)

Աստուածաշունչ Ս. Գիրք աժան տարածելու հանգանակութեան առթիւ կը խոստանամ նուիրել հինգ (5) Օսմ. ոսկի: Տ. Ն. Կ.

(*) Յօդուածագիրը, համեմատ հոգեւորականներէն, որուն ազգին եւ եկեղեցիին սիրոյն համար քերած օգտակար առաջարկը կը ներկայացնենք ազգին խորհող զանապաղին՝ եկեղեցական քաջաւորական՝ յուր ուշադրութեանը: Ամեն պարագայի մէջ գովելի է իր եռանդը, եւ շատ աչքգործ իր ֆենադատութիւնները՝ անպատճառաւ եկեղեցականներու հասցէին: Ծ. ԽՄԲ.

Տ. ԿՈՄԻՏԱՍ Վ. Ի ՀԱՄԵՐԳԸ

Վերջապէ՛ս: Տաղանդաւոր և մեծահր-
մուտ երաժշտագէտը Բըդի Շանի մէջ(*) կի-
րակի օրը տուաւ գեղարուեստասէրներու
կողմէ այնքան սպասուած համերգը, խո-
րունկ սքանչացումի մէջ թողլով ստուար
բազմութիւնը՝ որ ճշմարտապէս հայ կեան-
քով մը ապրեցաւ անդգալի կերպով սահած
երեք ժամերուն մէջ: Հայու հոգին կը
թրթռար թեմին վրայ՝ մեծ վարպետին գոռ
չնշտերուն տակ՝ և այնքան կարճ ժամա-
նակի մէջ սքանչելի կերպով մարզուած իբր
300 ծաղկատի աղջնակներու և երաժշտա-
սէրներ երիտասարդներու ներդաշնակ եր-
գերուն մէջ: Հայ եկեղեցական երաժշտու-
թեան վսեմութիւնը իր բարձրագոյն կէտին
կը հասնէր այդ քաղցր ժամերու միջոցին,
և Հայ շինականի երգերը՝ հարմներգներ,
պարերգներ, սիրերգներ, մշակի երգեր,
բայց մանաւանդ պանդուխտի, գաղթա-
կանի երգեր, Կոռնկը Խորաբոյր, մուս-
նոյշ, փոխադրեցին ներկաները բոլորովին
տարբեր աշխարհ մը, Հայու դարաւոր բնա-
վայր՝ անոր դալարութեամբ, ծաղկազուտած,
բայց նաեւ արիւնոտ դաշտերն ու սարերը,
հեռու մայրաքաղաքի տպականած մշնու-
լորտէն և անոր փոքրոգութիւններէն:
Բնատոմիկ կեանքի անուշ հեռանկարը կը
պարզուէր հոգիի աչքերու առջև, և այդ
կեանքով, — հոգ չէ թէ ո՞րքան զօնգակ —
ապրելու վայրկեանական տենչը կը համակէր
դգայուն սիրտերը, թրջելով շատերու աչքը
քաղցր արտասուքով մը:

Արուեստին բարձրութեան առջև տեղի
պէտք է տային ամէն փոքրոգութիւններ:
Ուրախ ենք որ Տ. Կոմիտաս Վ. գիտցաւ
վեր մնալ ամէն գծով իրենց, կարեւո-
րութիւն չընծայելով իրեն դէմ և իր սարքած
համերգը ջուրը ձգելու համար կատարուած

(*) Շան անշի գոհացուցիչ և պատշաճ պի-
տիւնը, եթէ կարելի ըլլար ազգային սրահ մը
գտնել և տրամադրել մեծասաղանի երաժշտագի-
տի իր գերազանցողիկ ազգային-եկեղեցական
համերգը ծալու համար: Ծ. ԽՄԲ.

գաղտնի անորակելի արարքներուն: Իր-
մով բարձրացաւ հայ գեղարուեստին,
հայ երաժշտութեան համբաւը նոյն իսկ օ-
տար հանրածանօթ արուեստագէտներու
առջև: Իր երկարատե ներկայութիւնը բա-
րերար ազդեցութիւն մը պիտի ընէր Պոլ-
սահայուն երաժշտական ճաշակին աշխուս-
ման և... ազգայնացման տեսակէտով:

Մեծ կորուստ մը բրին այն երաժշտա-
սէրները, որ այս անմահ համերգն ուն-
կընդրելու առիթը վախճուցին (*):

ՈՒՆԿՆԴԻՐ ՄԸ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ՇԱԲԱԹ Ը

Ազգային ժողովին անցեալ ուրբաթի
նիստն ո՛րքան ապարդիւն՝ գործնական
տեսակէտով, — քանի որ Բաղաք. ժողո-
վոյ անդամոց անհատական և պարզ հրա-
ժարականներու ընդունելութիւնը կայ
միայն իբր որոշ արդիւնք, — նոյնքան նշա-
նաւոր եղաւ իր յուզումնալից տխուր մի-
ջադէպերով, որով ազգին հոգերն ու ցա-
ւերը մոռցած, կարգ մը Տեսաք Երեսփո-
խանք անձնական և կուսակցական հաշիւ-
ներ մաքրելու ելան մէկգմէկ ամբաստա-
նելով իրրեւ ոճրագործ, պարտկուած զեղ-
ծումներ քրքրուեցան, փոխադարձ ամ
բաստանութիւններ կամ զրպարտութիւն-
ներ — որն որ կ'ուզէք — նետուեցան իրա-
րու երեսին, և իրերը մնացին նախկին
անիշխանական վիճակին մէջ: Վարչական
երկու ժողովները հրաժարած են վերջնա-
պէս, և քնականաբար պաշտօնէ կը դադ-
րին Տեսուչ Խորհուրդները: Պատրիարքա-
կան հրաժարականի խնդիրն առկա կը
մնայ միշտ իրրեւ գժտութեան խնձոր մը,
մինչ միւս կողմէ թերթերու մէջ կը կար-

(*) Դոհուքիսմը կը կարգանք բերքերու մէջ,
թէ սեխամար եղած խնդրանքներու վրայ տաղան-
դաւոր վարպետ մտադիր է երկրորդ համերգ մըն
ալ տալ: Ծ. ԽՄԲ.

դանք թէ Ամեն . Դուրեան սրբազան ի մօտոյ Երուսաղէմ պիտի երթայ, ինքզինքը նուիրելու բանասիրական ուսումնասիրութեանց : Կրօն . Ժողովին համար Համագումարին կողմէ պատրաստուած ընտրելիաց եռապատիկ ցանկը՝ հազիւ կարգացուած՝ սկսաւ առիթ տալ դիտողութեանց, որք յետաձգուեցան վերջնական նկատառութեան ատենին : Նիստին վերջանալէն ետքը երեսփոխան մը Տքգ . Տատուր՝ խոշտանգուեցաւ եկեղեցւոյ բակին մէջ, և ուրիշ երեսփոխան մը՝ Վահան էֆ . Թէքէեան՝ նոյն բախտին պիտի վիճակուէր ապահովարար, եթէ նոյն պահուն իսկ մէկ քանի ոստիկաններու երկուսը հանդարտեցուցիչ ազդեցութիւն մը չընէր սօսիւյակիր պարոններու ազգասիրական (?) եռանդին վրայ : Ազգ . Ժողովոյ տարեգրութիւնք նոր էջով մըն ալ ճոխացան ուրեմն սոփայի շահատակութեանց :

Երեսփոխաններու մեծամասնութեան խորհրդակցութեանց հետեւանօք եղած հրաւերի մը վրայ, Ազգ . Ժողովին Մայր Դիւանը առջի օր ծանոյց թերթերու մէջ թէ «Ազգ . Ժողովին հեղինակութիւնը բարձր պահելու և խօսքի և վիճաբանութեան ազատութիւնն ապահովելու համար ձեռք առած է ազգային և քաղաքային միջոցներ, զորս ի գործ պիտի դնէ անաստղներուն նկատմամբ» :

Յուսանք թէ Ազգ . Ժողովին այս շարթուան նիստը խաղաղ անցնի, և Ժողովը կարենայ մտքի հանդարտութեամբ լուծել օրակարգի կարեւորագոյն խնդիրները, այն է՝ 1. Քուէարկութիւն Ս . Պատրիարք Հօր հրաժարականի մասին ներկայացուած բանաձեւերուն, և 2. Լ'նտրութիւն Ազգ . Կեդր . Վարչութեան Կրօն . և Քաղաք . Ժողովներուն :

ԵՐՈՒՍՈՂԷՄԻ վանքին սեփական և Եաֆայի մէջ գտնուած կալուածի մը մահլիւ նկատուելուն մասին՝ տրուած վճիռի մը առթիւ, Ազգ . Պատրիարքաբանը՝ դիմում ընելու վիճակին մէջ չըլլալով, — քանի որ ոչ Վարչութիւն կայ, և ոչ Պատ-

րիարք, խնդրոյն ստիպողութեան պատճառով Երուսաղէմի Պատր . Փոխանորդ Տ . Սմբատ Վ . Գազազեան Դշ . օր ներկայացաւ Շէյխ-իւլ-Իսլամ Մուսա Քենէղիւմ էֆ . ի, որ ընդունեց թէ այդ խնդրոյն մէջ սխալ մը գործուած է, և թէ պէտք է որ Պատրիարքական իրաւանց հիման վրայ խնդիրը նորէն քննուի : Այս քննութիւնը պիտի կատարուի Թէպիզաթը Շէրիի դատարանին առջեւ, որ Շէյխ-իւլ-Իսլամութեան Դրան բարձր դատարանն է :

ՆՈՐԱՊՍԱԿ եպիսկոպոսներէն Գաղատիոյ առաջնորդ Տ . Բաբգէն Ս . Կիւլէսէրեան Կովկասէն մայրաքաղաքս վերադառնալու համար ճամբայ ելած է, և Սինօպի մէջ քառանդինայի չըջնան անցընելէ ետքը, այսօր վաղը մայրաքաղաքս կը ժամանէ : Տ . Բաբգէն եպիսկ . Կովկասի մէջ անցուցած մէկ քանի շաբաթներու միջոցին հետամտած է մօտէն ծանօթանալու Կովկասահայ ազգային և դրական կեանքին : Այցելած է եկեղեց . և ազգ . հաստատութեանց և գործիչներուն : Թիֆլիզի Հովիթ շաբաթաթերթը, որ Տանաւէն արտատպած էր Ն . Սրբազնութեան կենսագրականը, կը ծանուցանէ թէ Գաղատիոյ Ս . Առաջնորդը՝ իր թեմին բազմաթիւ մանուկներէն գոնէ մէկ քանի տաճնեակին միջնակարգ կրթութիւն մը տալու գործն ապահովել փափաքելով, օգտուած է իր ուղեւորութենէն, ուսանայ և թրքահայ ազգայիններու օժանդակութեամբ երկրորդական վարժարան մը բանալու ծրագիրն ի զուլս հանելու համար, և իր այս մտօքը բրած առաջարկներն համակիր ընդունելութիւն գտան Թիֆլիզի մէջ : Յուսալի է որ Ն . Սրբազնութեան օգտաշատ մտադրութիւնը նոյն քաջալերիչ ընդունելութիւնը կը գտնէ նաև Պոլսոյ մէջ, և մասնաւորապէս Անկիւրիացի պատուական ազգայիններու կողմէ :

ԲԱՂԷՇԻ կուսակալը, գնահատելի արդարապիթութեամբ մը, Զիուրի բռնակալ Նէճմէտտինէն ետ առեր է բռնի գրաւած հողերը, և յանձնեւ է հայ և քուրդ գիւղացիներու :

ԱՅՐԻԱԽՆԱՄ Յանձնաժողովը օրինակելի գործունէութիւն մը կը ցուցնէ ներկայ ազգային վարչական անկերպարան վիճակին մէջ, վերջին նիստին որոշեց զիմիւ Արեւելեան գորգի Ընկերութեան պետ Մ. Ալեօթիի, և խնդրել որ գորգանոցի մասնաճիւղ մը հաստատէ Հաճընի մէջ ալ: Խորհրդակցութիւններ կատարեց գորգագործ, գուլպայագործ և եազնայագործ վարպետներու հետ. նաեւ որոշեց խորհրդակցիլ ծանօթ վաճառական Իրբանոսեան էֆ.ի հետ, օգտուելու համար իր փորձառութենէն՝ ի նպաստ Կիլիկեան թշուառայրիներու, որոնց ընծայուելիք լաւագոյն օժանդակութիւնը՝ գործ, աշխատութիւն հայթայթելն է:

* Որբախնամ Յանձնաժողովը վերջնական վիճակագրութիւն մը պատրաստած է Կիլիկիոյ մէջ գտնուած որբերու թիւին նկատմամբ: Ըստ այսմ Կիլիկիոյ մէջ կան՝

Այրի եւ չափահաս աղջիկ	Որբ
Հայ	3191 5581
» կաթողիկ	106 219
» բողոքական	554 921
Սիւրեանի կաթողիկ	22 26
» գատիմ	83 151
Քիլւանի	31 47
	4045 6995

Էջմիւսէն հասած հեռագրերէ սերլութեամբ կ'իմանանք մահը Տ. Եզեկիէլ Մ. Վ. Արչակունիի, որ եպիսկոպոսանալու գաղտնիքէն Չարսանճագի Վիճակին վրայ, Բաւական տարիներ առաջնորդութիւնը վարած է Տիարպէքիւրի, լաւ յարաբերութիւններ մշակելով տեղւոյն կառավարութեան հետ: Երուսաղէմի միաբան էր, 46 տարեկան:

* Էջմիածնէն հասած ուրիշ տեղեկութեանց համաձայն, Մայր Աթոռի մէջ վախճանեց Տ. Գրիգոր Եպ. Գառնակերեան, 78 տարեկան հասակին մէջ: Իր զլխաւոր գործունէութիւնն եղած է Ղաւարաղի թեմին մէջ, որուն առաջնորդութիւնը վարած է:

ԳՈՂՈՒԹԵԱՄԲ կը ծանուցանէր թէ Տիարպէքիւրի առաջնորդ նորապսակ Գեր. Տ. Զաւէն Ս. եպիսկ. Եղիայեան Պէշիկ-թաշի առժամեայ քարոզչութեան կոչուած է:

ԿԱՐԵՒՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

ՆԱԳԱՇ ՅՈՎՆԱԹԱՆ

ԵՒ

ՅՈՎՆԱԹԱՆ ՅՈՎՆԱԹԱՆԵԱՆ ՆԿԱՐԻՉԸ

Արչակ Զօպանեան, մեծ տաղանդի ու եռանդի տէր ծանօթ գրագէտը, որ այնքան կարեւոր դեր մը կատարեց ու կը կատարէ քաղաքակրթութեան ոստանին Բարիզի մէջ, Հայը ծանօթացնելով իբրեւ Արեւելքի մէջ քաղաքակրթութեան ամէնէն աւելի ընդունակ և քաղաքակրթող կարեւոր տարր մը, նոր և կարեւոր ծառայութիւն մը կը մատուցանէ Հայ Դրսկանութեան և Հայ Գեղարուեստին, ծանօթացնելով մեզի՝ Նահայեան Բուշակէն ետքը՝ ուրիշ հայ աշուղ մը, Նաղաշ Յովնաթան և հայ նկարիչ մը, Յովնաթան Յովնաթանեան: Հմուտ ներածութեան մը մէջ, զոր Արչակ Զօպանեան միայն կրնայ գրել, կը պատկերացուին երկուքին ալ ուշագրաւ գործերը: Շքեղ տրպագրութեամբ և նկարիչին գեղեցիկ նկարներուն փառաւոր լուսանկարներով զարդարուն, այս հրատարակութիւնը պատիւ կը բերէ թէ՛ տաղանդաւոր գրագէտին և թէ՛ զայն հրատարակութեան տուող ազնիւ ու գերազանցօրէն գրասէր անձնաւորութեան, Վսեմ. Տիգրան Խան Քէլէկեանի, և անհրաժեշտ է որ գտնուի ամէն գրասէրի և գեղարուեստասէրի մատենադարանին մէջ, ըմբոշխնելու համար հին և անծանօթ միացած տաղանդի մը՝ Աշուղ Յովնաթանի անուշ տաղերը, և նոր ու քաջածանօթ տաղանդի մը՝ Զօպանեանի ուշագրաւ ուսումնասիրութիւնը, Տպ. Բարիզ, 1910, Գին 3 ֆր.:

ԱՐՏՈՆԱՏԷՐ

ՀՄԱՅՆԱԿ ԴՀՆՅ. ԷՐԱՆԻՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ

ԶԱՐԽԱՅՐ ԴՀՆՅ. ԿԷԶՈՒՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ

Զախմախար, Յակոբեան խան

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY
1870-1871
1872-1873
1874-1875
1876-1877
1878-1879
1880-1881
1882-1883
1884-1885
1886-1887
1888-1889
1890-1891
1892-1893
1894-1895
1896-1897
1898-1899
1900-1901
1902-1903
1904-1905
1906-1907
1908-1909
1910-1911
1912-1913
1914-1915
1916-1917
1918-1919
1920-1921
1922-1923
1924-1925
1926-1927
1928-1929
1930-1931
1932-1933
1934-1935
1936-1937
1938-1939
1940-1941
1942-1943
1944-1945
1946-1947
1948-1949
1950-1951
1952-1953
1954-1955
1956-1957
1958-1959
1960-1961
1962-1963
1964-1965
1966-1967
1968-1969
1970-1971
1972-1973
1974-1975
1976-1977
1978-1979
1980-1981
1982-1983
1984-1985
1986-1987
1988-1989
1990-1991
1992-1993
1994-1995
1996-1997
1998-1999
2000-2001
2002-2003
2004-2005
2006-2007
2008-2009
2010-2011
2012-2013
2014-2015
2016-2017
2018-2019
2020-2021
2022-2023
2024-2025

THE UNIVERSITY OF CHICAGO
LIBRARY

ՍՏԱՅՈՒԱԾ ԳԻՐԲԵՐ

ՄԷՔԹԷՊ ԱՐԳԱՏԱՇԸ, գրեց Ադեմս.
Գրչընճեան. — Հայ դպրոցներու յատուկ
թուրքերէնի ուսման գործնական դասա-
գիրք, տաճկերէնի նորագոյն ուղղագրու-
թեամբ յօրինուած: Ամբողջը չորս հատորէ
պիտի բաղկանայ: Հրատարակուած է Ա.
Հատորը, գին 100 փարա:

ՀՄԱՅՆԱԿ ՔԱՀԱՆԱՅ ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏԱՐԵՐՔ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵՋՈՒԻ

Ա. Բ. Գ. հատոր

% 30 գեղջ

Կեդրոնատեղի՝ Սիւմպիւլիւ խան Փափազ-
եան գրատուն:

ՅՈՎՀԱՆՆԷՍ Գ. ՀԵՌԼԵԱՆ

ԱՏԱՄԱՐՈՅԺ

(Վկայեալ Կայսերական բժշկական վարժարանէն)

Պեշկաք, Հայոց եկեղեցիին ճիշդ դիմացը:

Կը դարմանէ ակուայի եւ լինտերու
ամէն տեսակ հիւանդութիւններ. կը չինէ
քնականին յար եւ նման ակումներ փառ-
ջուր կամ ոսկի փրփի վրայ: Չափէն աւելի
փտած ակումները փռոսնէ կ'ընէ. կը չինէ
նաեւ dent à pont ամբողջ ոսկիէ կամ
քոսարդնէ:

Հիւանդ կ'ընդունի Դ. և Ուր. օրերը
առաւօտէն մինչեւ երեկոյ. ուրիշ օրեր ի-
րիկուան ժամը 12էն մինչեւ 3 (Ը. Թ.):
Ատկէ դուրս մասնաւոր ժամադրութիւն:

Կիրակի օրերը մինչեւ կէս օր ձրի:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԳ

ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ

ԱՆԳԼԻԵՐԷՆԷ ՀԱՅԵՐԷՆ

Զ. Տ. Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

1136 Ութածալ էջ. — Websterի հրատա-
րակիչներէն առնուած 800 գեղեցիկ
պատկերներով

Եղական աշխատութիւն. գնահատուած
Հայ և օտար բաղմաթիւ անձնաւորու-
թիւններէ: Անգլիերէն Հոմանիշներ բառե-
րու տակերը դրուած յար եւ նման Webs-
terի: Մասնաւոր Յաւելուած մը Անգլիա-
կան և Ամերիկեան բաղմաթիւ ոճերու և
և ասացուածներու օրինակներով բացատ-
րուած: Մասնաւոր Յաւելուած մը Անգ-
լիական նոր ուղղագրութեան բարեհաճ
արտօնութեամբ, Simplified Spelling
Boardի:

Անկլո-Հայ Փափազեան բառարանը՝
արդիւնք երկարամեայ ուսումնասիրու-
թեան և տաժանելի աշխատութեան, պատ-
րաստուած է մեծ խնամքով և զլիաւոր
հետեւողութեամբ Websterի և Cassellի
վերջին բառագրոց և նիւթական ու բա-
րոյական ու է գոհողութիւն չէ խնայուած
Ամենակատարեալը, Ամենավստահելին և
Անմրցելի ընելու համար:

Անկլո-Հայ Փափազեան բառարանը կը
ծախուի մասնաւորապէս պատրաստուած
տուփերու մէջ ի գին անգլիական լաթա-
կազմը 70 իսկ կիսակաշին 75 դահեկանի,
փոսթի ծախքով 75 և 80 դահեկանի: Ամե-
րիկայի համար 3 տոլար և 3.20ի, իսկ Եւ-
րոպայի համար 16 և 17 Ֆրանքի: Փո-
խարժէքը զրկել չէքով կամ մանտարոս-
թով ուղղակի հեղինակին, առանց երրորդի
մը, յապաղմանց և այլ անպատեհութեանց
տեղի չտրուելու համար:

Հասցէ,

Z. D. S. PAPAZIAN,
Bible House

Constantinople, (Turkey)